ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 03-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան **«03» փետրվարի 2023թ.**

2023 թվականի փետրվարի 03-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմնի) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստը:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի տարեկան հաշվետության քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Գ. Խաչատրյան

2. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում:

3. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում:

4. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կողմից 2022 թվականին յուրաքանչյուր եռամսյակ կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացված տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվություն:

Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Գ.Գիլոյան

5. Թույլատրել գնումների պլանի փոփոխություն (Բենզին ռեգուլյար գնամն առարկային միավորի գնի և քանակի փոփոխություն):

(Հաշվի առնելով ԿԽ անդամների առաջարկությունները՝ սույն հարց դրվեց էլեկտրոնային քվեարկության):

Քվեարկությանը մասնակցում էին՝

Ա. Փամբուխչյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Ա.Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Ա.Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա.Ավանեսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Քեյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Տ. Բաբայան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Դ. Սողոմոնյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Հովսեփյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Գ.Սանոսյան – ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարար

Ա. Ղուլարյան - Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ն.Տերյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 9 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի տարեկան հաշվետությունը:

2. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությունն ընդունվեց ի գիտություն:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ն. Մելիքսեթյան**